

## ՄՈԶԲՆ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (իտսվածք)

Ըլում են, չեն ըլում՝ մի մարդ, մի կնիկ: Սրանք մի բեխա էլա ունենում չեն: Շատ ու շատ ռահմով են ըլում: Ո՞վ թասով ա տալիս ըլում, սրանք խանով են տալիս, ո՞վ խանով ա ըլում տալիս, սրանք ջվալով են տալիս: Նրանք շատ հարուստ են ըլում. իմա մինն էլ ա նրանց աշքումը զալիս չի ըլում:

Նրանք հենց միալար ասելիս են ըլում. «Է՞ հ, ընչներո՞ւս ա պետքն էս դդար դովլաթը, էս անքուն ցեցը, եք մենք մի բեխա չունինք, որ նրանով իսնդանք, ուրիսանանք: Էրնեկ աստոծ սրա կեսը, կիսի կեսն էք մեզ տվել ու մի սիրուն տղա...»:

Երոր նրանք ջիլիգ պառաված են ըլում, մելներուն կտրած, որ բեխա ունենան, մի դոնում դրանց տուն ա զալիս մի դարվիշ: Կնիկը որ լիուրուր ըդքատափայ ա տալիս, դարվիշը հարցնում ա. — Ա՞յ քիրա, ընչի ուրիշնին բռնով ու թասով են փայ տալիս, դու կորով:

— Է՞ հ, ի՞նչ անեմ, ա յ իմ արդեք, — ասում ա պառավը, — լնգնզան օջախ ենք, անքուն ցեցի տեք, տուն ու դուռը լիքը, ուստող չունինք: Էտենց լիուրուր տալիս ենք, յա՝ ֆոգու կլի, յա՝ արևի:

Դարվիշը ջերիցը հանում ա իրեք խնձոր ու պառավին տալիս. — Էս խնձորնին վե կալ, վրա իրեք օրը մին-մին կե, դեռ տարին չանցկացած՝ տղա կունենաս:

Պառավը խնձորնին վեր ա ունում ու տանում թրեքին շարոտում: Շիզունը ժամն ա գնում ու տուն զալիս, մտիկ անում խնձորնուն էն դայդի շափաղին են տալիս ըլում, որ սիրտը թրթռում ա, էլ կտրում չի համբերել. վեր ա կալնում ու մի խնձորի թշիցը մի լավ կծում: Էն դայդի անուշ ա ըլում խնձորը, որ բերնի ջուրը ըդու ա ըլում: Պառավը վեր ա ունում իրեք խնձորն էլ ուտում: Անց ա կենում քիչ փախտ, էս պառավը երկու փողիսանում ա: Անց ա կենում իննը ամիս, իննը օր, իննը սիաթ, պառավը բերում ա մի ֆորթ: Խեղճ պառավն ուրիսանալու տեղ սև օր սուգ ա նստում: Ո՞վ լաց կլի՝ քու պառավը, ո՞վ չի լաց ըլիլ՝ քու պառավը: Գշեր-ցերեկ աղի էրտասունք ա վեր ածում ու դարվիշին անըծքաչոր անում:

Վրա մի տարին մարդը մեռնում ա: Ֆորթն էլ մոզի դառած ա ըլում: Ռավուտները գնում ա հանդը բածելու, բիզները տուն ա զալիս, մորը բարի բիզուն ասում ու կրակի դրադին խտոր ընգնում, քնում:

Էսենց անց ա կենում իրեք տարի: Մի բիզու Մոզին վեր ա կալնում ու մորն ասում. — Ա՞յ մերա, ես էսա հասակս առել եմ, պետք ա կնիկ ուզեմ. ռավուտահանա վազը վե կկենաս կերթաս թգավորի կուշտը, կոսես. «Իմ Մոզին քու ախչկանն ուզում ա...»: Պառավը մնում ա վերքաշված. դեռ հյա սիրտ անելիս չի ըլում, վերջն ասում ա. «Հալքաթ էստի մի բան կա, թե չէ՞նա ո՞նց ջուրիաթ կոներ, թգավորի ախչկանն ուզելու»: Պառավը ճամփա ա ընգնում գնում թգավորի կուշտը:

Պառավը թուշ գնում ա, նստում թգավորի խնամխոսի բարի վրեն: Թգավորի նազիր-վեզիրնին զալիս են, ուզում են վե կացնեն, նա վեր չի կենում: Ասում ա, որ գնան թգավորին իմաց տան, թե մի պառավ ա եկել, ուզում ա՝ թգավորի ախչկանն իր Մոզու հմար ուզե: Թգավորը հրաման ա տալի, որ պառավին իր կուշտը կանչեն: Պառավին կանչում են թգավորի ամարաթնին:

— Ի՞նչ խոսք ունիս, ա յ մերա, — հարցնում ա թգավորը քաղցրութենով:

— Թգավորն ապրած կենա, — ասում ա պառավը, — իմ Մոզին ախչկանդ ուզում ա:

— Շա տ լավ, թող ուզե, — ասում ա թգավորը. — Հմա իրեք բան ունիմ նրանից ուզելու, թե որ կատարեց՝ իսխստ լավ, թե չէ ու՝ նրա զլուխը տալ կըտամ: Գնա քու Մոզուն ասա, որ ինձ մի ուսկե սինի դրգե, ոսկով լիքը, ոսկե սինով ծածկած:

Պառավը վեր ա կենում ու փոխփոշիման տուն գալիս:

Միզունը Մոզին հանդիցը տուն ա զալիս տենում, որ մերն ունքերը կիտած, տիտոր ու տրտում նստած ա օջախի դրադին:

— Բարի բիզո՞ւ, ա յ մերա, ընչի՞ ես էտենց ունքերդ կիտել, ի՞նչ ասավ թգավորը:  
— Ո՞նց չի ունքերս կիտեմ, ա յ որդի, ախր մեր ի՞նչ բանն ա թգավորի ախչիկ ուզել. Էն դայդի բաների ա տեղակ տալի, որ մեր տուն ու տեղը ծախենք, է՛լ չենք կարալ նրա ուզածը տալ:

— Էլլրե՛, ա յ մերա, ի՞նչ ասավ:  
— Թգավորն ուզում ա՝ մի ոսկե սինի, ոսկով լիքը, ոսկե սինով ծածկած:  
— Հենց դրա հմար ես դարդ անո՞ւմ: Դրա բանը հեշտ ա, — ասում ա Մոզին: — Միզունը քնելիս վե կալ մի պղնձե սինի, մի սև փող ոի մեջը, մի պղնձե սինով ծածկե, ոի ծալքի վրեն, ուզուտը հեշվել իմ վե կենալը ո՞նց ծալքին մողենաս, ո՞նչ սինին ժաժա տաս:

Ոնց որ ասել էր Մոզին, պառավը կատարում ա: Մթնում ա, քնում են:

Էզսի ուզուտը վեր են կենում, տենում, որ պղնձե սինենին ոսկի են դառել, միջի փողն էլ ոսկե փողեր, սինին լցվել, դրադներիցը վեր ա թափվում:

Պառավը վեր ա կալնում, տանում թգավորին տալիս:

Թգավորն ասում ա. — Գնա՞ , քու Մոզուն ասա, որ իմ ախչկա հմար մի ձեռք շոր դրգե, որ ո՞նչ ձեռք ըլի դիբած, ո՞նչ ասեղ ժած էկած:

Պառավը վեր ա կենում ու փոխփոշման տուն գալիս:

Միզունը Մոզին հանդիցը տուն ա զալիս, տենում, որ մերը ունքերը կիտած, տիտոր ու տրտում օջախի կշտին նստած ա:

— Բարի բիզո՞ւ, ա յ մերա, ընչի՞ ես էտենց ունքերդ կիտել, ի՞նչ ասավ թգավորը:  
— Ո՞նց չի ունքերս կիտեմ, ա յ որդի, ախր մեր ի՞նչ բանն ա թգավորի ախչիկ ուզել, Էն դայդի բաների ա տեղակ տալի, որ տուն ու տեղ ծախենք, է՛լ չենք կարալ նրա ուզածը տալ:

— Էլլրե՛, ի՞նչ ասավ:  
— Թգավորն ուզում ա իր ախչկա հմար մի ձեռք շոր, որ ո՞նչ մարդու ձեռք դիբած ըլի, ո՞նչ վրեն ասեղ ժած էկած:

— Հենց դրա հմար ես դարդ անո՞ւմ, դրա բանը հեշտ ա, — ասում ա Մոզին. — Միզունը քնելիս վե կալ մի սինի, միջին մի թզնքու տերև ու մի սինի էլ վրեն ծածկե, ոի ծալքի վրեն, ուզուտը հնչվել իմ վեր կենալը ո՞նչ ծալքին մողենաս, ո՞նչ սինին ժած տաս:

Ոնց որ Մոզին ասել էր, կատարում ա: Մթնում ա, քնում են:

Էզսի ուզուտը վեր են կենում, տենում, որ պղնձե սինենին ոսկի են դառել, թզնքու տերևը դառել ա մի ձեռք շոր, որ ո՞նչ վրեն ասեղ ա ժած էկած, ո՞նչ մարդու ձեռք դիբած: Պառավը վեր ա կալնում, տանում թգավորին տալիս:

Վրա իրեք դռնումն ասում ա թգավորը. — Գնա՞ քու Մոզուն ասա, որ իմ ախչկանը հենց պետք ա տուն տանիս, որ ո՞նչ գլուխն արև տենու, ո՞նչ ոտը՝ գեղին:

Պառավը վեր ա կենում ու փոխփոշման տուն գալիս:

Միզունը Մոզին հանդիցը տուն ա զալիս, տենում, որ մերը ունքերը կիտած, տիտոր-տրտում օջախի կշտին նստած ա:

— Բարի բիզո՞ւ, ա յ մերա, ընչի՞ ես էտենց ունքերդ կիտել, թգավորն ի՞նչ ասավ:  
Ո՞նց չի ունքերս կիտեմ, ա յ որդի, ախր մեր ի՞նչ բանն ա թգավորի ախչիկ ուզել: Էն դայդի բաների ա տեղակ տալի, որ տուն ու տեղ ծախենք, է՛լ չենք կարալ նրա ուզածը տալ:

— Էլլրե՛, ի՞նչ ասավ:  
— Թգավորն ուզում ա, որ իր ախչկանը էն դայդի տուն տանիս, որ ո՞նչ գլուխն արև տենու, ո՞նչ ոտը՝ գեղին:

— Հենց դրա համար ես դարդ անո՞ւմ: Դրա բանը հեշտ ա,— ասում ա Մողին.— Շիզունը քնելիս մի ջվալ լցրու փալաս-փուլուսով ու տաշեղնով ու դի ծալքի վրեն. հեշվել իմ վեր կենալը ո՞չ ծալքին մոտենաս, ո՞չ ջվալը ժաժ տաս:

Ոնց որ Մողին ասել էր, կատարում ա: Մթնում ա, քնում են:

Գշերվա մի վախտը Մողին վեր ա կենում ու վերոնում ջվալը, ձամփա ընգնում դպա թզավորի ամարաթնին: Գնում ա, որ հասնում նրա օթախնուն, մին տաշեղ ա դնում, մին փալաս, մին տաշեղ, մին փալաս... հեշվել իրանց տունն, ու գալիս ու կրակի դրադին խոռը ընգնում, քնում:

Էզսի ռավոտը վեր են կենում՝ տենում, որ տաշեղ-խուշուրնին դառել են ուրի ծառեր, փալաս-փուլուսնին դառել են խալիչեր:

Մողին վեր ա կալնում գրւնա, դիոլ ու ձամփա ընգնում դպա թզավորի ամարաթնին: Թզավորն օխտն օր, օխտը գշեր հրասնիք ա անում ու ձամփու դնում իր ախչկանը Մողու հետ: Գշերը, եր փեսեն հարսի կուշտը պտի գնալ, մին էլ տենում ա հարսը, որ Մողին կաշին հանեց ու դրեց դրադը: Կաշվի միջից մի տղա ա դուս գալիս, որ բեզնակի նման մարդի աչք ա ծակոտելիս ըլում: Ախչիկը շատ ուրիսանում ա: Քնում են. Էզսի ռավոտը տղեն վեր ա կենում, էլեղ հագնում իր կաշին, դառնում մոզի ու գնում հանդս բածելու:

Էսենց անց ա կենում՝ մի օր, երկու օր, իրեք օր, ախչիկը շատ դաշում, պղատում ա իր մարդին, որ էլ կաշին հագնու ոչ, հմա մարդը անում չի: Ախչիկը նրա ջզրու մի գիշեր վեր ա կենում ու մարդուց թաքուն նրա կաշին թորնի մեջը գձում, էրում: Էզսի ռավոտը մարդը վեր ա կենում, ման գալիս, կաշին գդնում չի: Հայ էս պուճախ՝ կաշի, հայ էս պուճախ՝ կաշի. չէ՝ կա ոչ ու կա ոչ: Մարդը դառնում ա աղունիկ ու դուս թոշում: Կնիկը վեր ա կալնում իրեք խնձոր ու նրա եղնեն ձամփա ընգնում:

Շատ ա գնում, թե քիչ՝ տենում ա ձամփին մի բեխա:

— Այ ախսպեր, մարդ չե՞ս տեհել դեսը գնալիս:

— Չէ, այ քիրա,— ասում ա էս տղեն,— հմա ռավոդահան դեսը մի աղունիկ թռած գներ:

Կնիկը խնձորնուցը մինը տալիս ա էդ տղին, ինքը գնում:

Շատ ա գնում, թե քիչ՝ տենում ա մի մեջ-մարդ ձամփեննի գալիս:

— Այ, ախսպեր, դեսը մարդ չես տեհել գնալի ս:

— Չէ, այ քիրա,— ասում ա էս մարդը:— Հմա ձաշին դեսը մի աղունիկ գներ թռած:

Կնիկը տալիս ա խնձորնուցը մինն էդ տղամարդին, ինքը գնում:

Շատ ա գնում, թե քիչ՝ ռաստ ա զալիս նրան մի հլսոր՝ ձամփեննի գնալիս:

— Ապէ ր, դեսը մարդ չես տեհել գնալիս:

— Չէ, ախչիկս,— ասում ա հլսորը,— հմա նոր մի աղունիկ գներ թռած, որ մի քիչ եզին գնաս, եղնեն կհասնուս:

Կնիկը վերջի խնձորն էլ նրան ա տալիս ու գնում:

Շատ ա գնում, թե քիչ՝ տեսնում իրես իրան մարդուն թռած գնալիս: Նրան տենուլն ու աղունիկ դառնալը մին ա ըլում: Մարդի եղնեն որ հասնում ա՝ մարդը մի անտակ ծովի մեջն ա ընգնում:

Կնիկն էլ նրա եղնեն ընգնում ա ծովի մեջը: Երկուսն էլ իրար գրնում են ու ծովի տակին ապրում, որ մարդիկ նրանց տենուն ոչ:

Խերն ու բարաքյաթն էստի, շառն ու շուռը անօրենի գլխին: